<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
չորեքշաբթի, 16 հունիսի 2021թ., 14:15

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
19 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Վարդան Աթայան
Արտեմ Կոնստանդյան

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Դավիթ Պետրոսյան
Գուրգեն Ղուկասյան
Արթուր Ապերյան

Հրավիրվածներ
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ Մանանա Աղիկյան
Հայաստանի բանկերի միության գործադիր տնօրեն Սեյրան Սարգսյան
<Ֆինարմ> ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյան
<Գրանթ Թորնթոն> ՓԲԸ գործադիր տնօրեն Արմեն Հովհաննիսյան
<Արմենբրոկ> ԲԲԸ գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյան
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 16.06.2021թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 2021թ. ապրիլի 30 դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով հրապարակվել է azdarar.am կայքում, Բանկի պաշտոնական կայքէջում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով կամ հանձնվել են առձեռն 31.05.2021թ-ին:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 16.06.2021թ.՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 16.06.2021թ-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172.886.525 հատ, որից քվեարկությանը մասնակցել են ձայնի իրավունք ունեցող 162.399.662 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 93.93%-ը:
Քվորումն ապահովված է:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին: Նշեց, որ ճիշտ ռազմավարության շնորհիվ Բանկը հաջողությամբ հաղթահարեց նախորդ տարվա դժվարին մարտահրավերները: Բանկին հաջողվեց պահպանել Moody’s-ի վարկանիշը B2 մակարդակում, կանխատեսումը՝ կայուն: Ի աջակցումն հաճախորդների իրականացվել է վարկերի վերակառուցում (մանրածախ՝ 34 մլրդ դրամ գումարի, կորպորատիվ՝ 9 մլրդ դրամ գումարի):
2020 թվականի ամենակարևոր ձեռքբերումներից **Գագիկ Զաքարյանը** նշեց Մոսկվայի բորսայում Բանկի պարտատոմսերի ցուցակումը և Ղազախստանի մայրաքաղաքում մասնաճյուղի բացումը: Հաջողությամբ իրականացնելով հաշվարկային սպասարկման մասշտաբների մեծացման ռազմավարությունը՝ Բանկը ապահովել է SWIFT միջազգային փոխանցումների ծավալի տպավորիչ աճ և միջազգային վճարումների բարձր որակ և մշակման արագություն ապահովելու համար արժանացել է Raiffeisen Bank International ավստրիական բանկի կողմից մրցանակի:
2020 թվականի արդյունքներով, Յունիբանկը դարձավ առաջատար տրամադրված POS վարկերի քանակով, զբաղեցնելով տվյալ սեգմենտում ընդհանուր շուկայի ծավալի մոտ 20%-ը: 2021թ. Բանկի զարգացման առաջնահերթ ուղղություններն են P2P վարկավորման շուկա դուրս գալը, ագրոբիզնեսի ֆինանսավորումը, տեխնոլոգիական նորարարությունների ներդնումը:
Ամփոփելով, **Գագիկ Զաքարյանը** վստահություն հայտնեց, որ բաժնետերերի, հաճախորդների, գործընկերների վստահության շնորհիվ Յունիբանկը կհասնի նոր համատեղ հաջողությունների, երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր օգնեցին հաղթահարել նախորդ տարվա նման դժվարին պայմանները:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ 2020 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ Վարչության հաշվետվությունը ներկայացնելու համար:

Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ հաշվետու տարում Բանկի գործունեության առանցքային ուղղությունն էր կորոնավիրուսի համավարակի հետևանքով ֆինանսական դժվարություններին առընչված հաճախորդների աջակցման ուղղությամբ լուծումներ մշակելը: Պետական ծրագրերին և Կենտրոնական բանկի հակաճգնաժամային միջոցառումներին մասնակցելուն զուգահեռ Յունիբանկը անհապաղ գործարկեց սեփական գործիքները՝ տրամադրելով հաճախորդներին հնարավորություն օգտվել վարկային արձակուրդներից և պարտավորությունների վերակառուցումից: 4-րդ եռամսյակում Բանկի օրակարգի կարևորագույն հարցը ռազմական գործողությունների մասնակիցներին և վերջիններիս ընտանիքներին աջակցելն էր:
Երկրում տնտեսական և սպառողական ակտիվության վերականգման հետ մեկտեղ, ինչպես նաև ամրության կուտակված պաշարի շնորհիվ Յունիբանկը բարելավեց ֆինանսական կայունության ցուցանիշները և գրանցեց դրական դինամիկա առանցքային ռազմավարական ուղղություններով:

Հաշվետու տարվա առանցքային իրադարձությունների թվում **Մեսրոպ Հակոբյանն** ընդգծեց առաջին արտասահմանյան մասնաճյուղի բացումը Աստանա Միջազգային Ֆինանսական կենտրոնում (Ղազախստանի Հանրապետություն), Մոսկովյան բորսայում դոլարային պարտատոմսերի երկրորդային ցուցակում իրականացումը, արտերկրում թղթակցային ցանցի ընդլայնումը, արհեստական բանականության տեխնոլոգիայի անգրավ սպառողական վարկերի սքորինգային համակարգում ներդնումը, բջջային հավելվածի հնարավորությունների ընդլայման միջոցով բանկային ծառայությունների հասանելիության դյուրացումը՝ Բանկի տեղեկատվական ռեսուրսների բարձր պաշտպանվածության ապահովմամբ:
Մեսրոպ Հակոբյանը ամփոփ ներկայացրեց Բանկի ֆինանսական ցուցանիշները, վարկավորման առաջնահերթ ուղղությունները, կադրային քաղաքականությունը, վերահսկող մարմինների հետ փոխգործակցության մասին տեղեկատվությունը:

Ներկայացնելով 2021թ. ռազմավարական առաջնահերթությունները՝ **Մեսրոպ Հակոբյանը** նշեց, որ Բանկի զարգացման հիմնական վեկտորները ուղղված են նոր իրականությանը հարմարվելուն, ֆինանսական և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արագացմանը, թվային վերափոխման պայմաններում ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործմանը, ինչպես նաև Բանկի ներքին արդյունավետության և արտաքին մրցունակության բարձրացմանը:

Հիշեցնելով, որ այս տարի Յունիբանկը նշում է իր 20-ամյակը, **Մեսրոպ Հակոբյանը** շնորհակալություն հայտնեց Յունիբանկի հիմնադիրներ Գագիկ Զաքարյանին և Գեորգի Պիսկովին, Վարչության առաջին նախագահ Վարդան Աթայանին, որոնց հետ միասին Բանկն անցել է զարգացման երկար ուղի, ինչպես նաև երախտագիտություն հայտնեց բոլոր հաճախորդներին, գործընկերներին, բաժնետերերին և Յունիբանկի ողջ թիմին հավատարմության և ընդհանուր գործում ներդրում ունենալու համար:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 162.399.662 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմված Բանկի 2020 թվականի տարեկան հաշվետվությունները հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ 28,450,237 հազ ՀՀ դրամ
2. պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 18,197,520 հազ ՀՀ դրամ
3. հաճախորդներին տրված վարկեր և այլն փոխատվություններ՝ 156,575,090 հազ ՀՀ դրամ
4. իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ 2,563,117 հազ ՀՀ դրամ
5. ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ 13,986,817 հազ ՀՀ դրամ
6. հիմնական միջոցներ՝ 10,287,139 հազ ՀՀ դրամ
7. ոչ նյութական ակտիվներ՝ 2,301,902 հազ ՀՀ դրամ
8. այլ ակտիվներ՝ 5,681,000 ՀՀ դրամ
9. ընդամենը ակտիվներ՝ 238,172,052 հազ ՀՀ դրամ
10. պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 29,573,686 հազ ՀՀ դրամ
11. պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 156,805,550 ՀՀ դրամ
12. ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ 30,336 հազ ՀՀ դրամ
13. փոխառություններ՝ 5,905,308 հազ ՀՀ դրամ
14. թողարկված պարտքային արժեթղթեր՝ 9,498,202 հազ ՀՀ դրամ
15. եկամտահարկի գծով ընթացիկ պարտավորություն՝ 0
16. հետաձգված հարկային պարտավորություն՝ 312,486 հազ ՀՀ դրամ
17. այլ պարտավորություններ՝ 2,147,402 հազ ՀՀ դրամ
18. ընդամենը պարտավորություններ՝ 204,272,970 հազ ՀՀ դրամ
19. բաժնետիրական կապիտալ՝ 20,489,653 հազ ՀՀ դրամ
20. էմիսիոն եկամուտ՝ 9,605,638 հազ ՀՀ դրամ
21. գլխավոր պահուստ՝ 608,510 հազ ՀՀ դրամ
22. այլ պահուստներ՝ 1,722,635 հազ ՀՀ դրամ
23. չբաշխված շահույթ՝ 1,472,646 հազ ՀՀ դրամ
24. ընդամենը՝ սեփական կապիտալ՝ 33,899,082 հազ ՀՀ դրամ

Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2020 թվականի ընթացքում՝

- զուտ տոկոսային եկամուտներ՝ 10,051,244 հազ ՀՀ դրամ
- կոմիսիոն եկամուտներ՝ 2,770,901 հազ ՀՀ դրամ
- կոմիսիոն ծախսեր՝ (614,638) հազ ՀՀ դրամ
- զուտ կոմիսիոն եկամուտներ՝ 2,156,263 հազ ՀՀ դրամ
- զուտ առևտրային եկամուտ՝ 1,118,369 հազ ՀՀ դրամ
- այլ եկամուտներ՝ 1,360,247 հազ ՀՀ դրամ
- ակտիվների արժեզրկման ծախս՝ (5,786,898) հազ ՀՀ դրամ
- անձնակազմի գծով ծախսեր՝ (3,862,403) հազ ՀՀ դրամ
- հիմնական միջոցների մաշվածություն՝ (975,205) հազ ՀՀ դրամ
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա՝ (145,757) հազ ՀՀ դրամ
- այլ օպերացիոն ծախսեր՝ (3,474,144) հազ ՀՀ դրամ
- շահույթ մինչև հարկումը՝ 441,716 հազ ՀՀ դրամ
- տարվա շահույթ՝ 238,576 հազ ՀՀ դրամ

<Յունիբանկ> ԲԲԸ-ի դրամական հոսքերը 2020 թվականին՝

- դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները՝ 5,962,981 հազ ՀՀ դրամ
- գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ (42,775,727) հազ դրամ
- դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ 1,045,238 հազ ՀՀ դրամ
- զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ 20,012,481 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազումը՝ (21,718,008) հազ ՀՀ դրամ
- արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ 586,941 հազ ՀՀ դրամ
- ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը՝ 5,597 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ՝ 49,575,707 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ՝ 28,450,237 հազ ՀՀ դրամ

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց <Գրանթ Թորթոն> աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի Բանկի ֆինանսական հաշվետվությունները տալիս են <Յունիբանկ> բաց բաժնետիրական ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 162.399.662 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 3. 2020թ. Ներքին աուդիտի հաշվետվության հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:

Ներքին աուդիտի տնօրեն Հայկ Սուվարյանը ներկայացրեց ըստ տարեկան աշխատանքային ծրագրի անցկացրած և արտապլանային աուդիտորական ստուգումների ոլորտները: Տարվա ընթացքում ստուգվել է 19 մասնաճյուղ, որից թվով 11-ը ենթարկվել են համալիր ստուգման, իսկ թվով 8-ը՝ նպատակային ստուգման ըստ ոլորտների:
Գլխամասային գրասենյակում իրականացվել է գործունեության 11 ոլորտների աուդիտ, ինչպես նաև նախորդ վերահսկող միջոցառումների արդյունքում հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման ստուգում:

Հայտնաբերված խնդիրների լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր, որոնց կատարման նկատմամբ իրականացվել է հետևողական վերահսկողություն:
Ներկայացնելով միջոցառումները, որոնց հիման վրա կազմվել է Ներքին աուդիտի կարծիքը Բանկի ներքին հսկողության համակարգի կազմակերպման արդյունավետության մասին, **Հայկ Սուվարյանը** եզրափակեց, որ Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած նվազագույն պահանջներին:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 162.399.662 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 4. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ:
- Վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին:

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետեր <Uniholding GG Limited> ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 147.805.227 հատ, արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ 32.010.000 հատ)
Էդուարդ Զամանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Հրահատ Արզումանյան ՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Դավիթ Փափազյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Վարդան Աթայան՝ Բանկի բաժնետեր (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 5.483 հատ)

Արտեմ Կոնստանդյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացել են ձայների հետևյալ քանակը.
Գագիկ Զաքարյան՝ 23.214.611 ձայն
Գեորգի Պիսկով՝ 23.197.567 ձայն
Էդուարդ Զամանյան՝ 23.183.602 ձայն
Հրահատ Արզումանյան՝ 23.183.596 ձայն
Դավիթ Փափազյան՝ 23.183.596 ձայն
Վարդան Աթայան՝ 23.191.293 ձայն
Արտեմ Կոնստանդյան՝ 23.189.637 ձայն
Բոլոր թեկնածուների դեմ՝ 0 ձայն
Թեկնածուների գծով ձեռնպահ՝ 0 ձայն
Անվավեր՝ 155.760 ձայն կամ մասնակիցների ձայների 0.03%

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ, վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին և հաստատել Խորհուրդը հետևյալ կազմով՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան:

Հարց 5. <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ Բանկի 2020թ. ֆինանսական գործունեության արդյունքներով, Բանկի Խորհրդի 29.04.2021թ. որոշմամբ առաջարկվում է սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, ըստ ՀՀՄՍ 238.576 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել շահույթի 5%:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց՝ սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, Բանկի՝ ըստ ՀՀՄՍ 238.576 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%.

կողմ՝ 162.399.662 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 6. <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում:

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ էր ներկայացրել <Գրանթ Թորնթոն> ՓԲ ընկերությունը:
ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան՝ Բանկի Վարչության՝ որպես Մրցութային հանձնաժողովի կողմից անցկացվել է մրցույթ: 08.04.2021թ. Վարչության որոշմամբ, հիմք ընդունելով մրցութային առաջարկի արդյունքների գնահատումը, հաղթող է ճանաչվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: «Յունիբանկ» ԲԲԸ 29.04.2021թ. Խորհրդի որոշմամբ, Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն որպես «Յունիբանկ» ԲԲԸ 2021թ. Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, <u>որոշում կայացրեց</u> հաստատել <Գրանթ Թորնթոն> ՓԲԸ միջազգային անկախ աուդիտորական կազմակերպությանը որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ.

կողմ՝ 162.399.662 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 7. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերի գնահատում

Աննա Բաղոյանը ներկայացրեց, որ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը հաստատվել են 29.06.2020թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ: Հաշվի առնելով, որ <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքում, ինչպես նաև այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում չեն կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեին նշված իրավական ակտերը խմբագրելու անհրաժեշտության, ի հայտ չեն եկել էական թերություններ և բացթողումներ, 29.04.2021թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է նշված ներքին իրավական ակտերը թողնել անփոփոխ:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, <u>որոշում կայացրեց</u> թողնել անփոփոխ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը.

կողմ՝ 162.399.662 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Աննա Բաղոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, դրանց հետ կապված որոշումներն ընդունված են:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և համոզմունք հայտնեց հետագա արդյունավետ համագործակցության մասին:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 15:00-ին:

_____	_____
Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բաղոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 16 հունիսի 2021թ.